

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Վ. ԲՐԻՏՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝

Դ. Գյուրջինյան

31.01, 2025թ.



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Վարդուիի Արթուրի Ղուկասյանի «ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՈՃԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ» Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ներկայիս աշխարհաքաղաքական գործընթացներում և միջազգային հարաբերությունների անընդհատ զարգացող համայնապատկերում արդյունավետ հաղորդակցությունը դիվանագիտության հաջողության անկյունաքարն է: Անժխտելի փաստ է, որ լեզվի նրբերանգներն առանցքային դեր ունեն դիվանագիտական գլոբալ խոսույթի ձևավորման, երկրների միջև փոխըմբռնման խթանման և հակամարտությունների լուծման գործում: Միջազգային դիվանագիտական խոսույթում ընտրված բառերը, լեզվաոճական հնարները կարող են խոր ենթատեքստ ունենալ՝ ձևավորելով դիվանագիտական հարաբերությունների ընթացքը, խթանելով համագործակցությունը և ճանապարհի հարթելով համաշխարհային ներդաշնակության համար:

Այս առումով Վարդուիի Ղուկասյանի ատենախոսության թեման **արդիական է**, քանի որ երկու ինքնուրույն գիտությունների՝ լեզվաբանության և դիվանագիտության

փոխհատման կետում առաջացած դիվանագիտական լեզվաբանության համատեքստում ուսումնասիրում են լեզվական այն իրողությունները, որոնք կարող են առանձնահատուկ նշանակություն ունենալ դիվանագիտական արդյունավետ խոսույթի կառուցման գործում: Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նաև լեզվաբանական գրականության մեջ թվային դիվանագիտության նոր ժանրերի և հաղորդակցական ռազմավարությունների անբավարար լուսաբանմամբ:

Աշխատանքի **գիտական նորույթը** դիվանագիտական խոսույթի հետազոտությունն է երեք գիտակարգերի՝ հանրամշակութաբանության, կառուցվածքային և գործառական լեզվաբանության զուգադիր հենքի վրա: Աշխատանքում նաև առաջին անգամ փորձ է կատարվում համալիր վերլուծության ենթարկել թվային դիվանագիտության խոսույթը՝ որպես հաղորդակցության նոր միջոց:

Աշխատանքի **տեսական արժեքը** պայմանավորված է այն հանգամանքով, որ հետազոտության արդյունքները, մի կողմից, որոշակիորեն նպաստում են «խոսույթ» հասկացության ուսումնասիրության զարգացմանը՝ հնարավորություն ընձեռելով ընդլայնել և խորացնել դիվանագիտության լեզվի մասին գիտելիքները գլոբալ քաղաքական փոփոխությունների համապատկերում, և մյուս կողմից, հաղորդակցական և գործառական գործունեության վերլուծությունը ճշգրտում է դիվանագիտական հաղորդակցության հանրամշակութային ու հոգեբանական դիտանկյունները: Ատենախոսությունը կարող է հիմք դառնալ «դիվանագիտական խոսույթ» հասկացության հետագա ուսումնասիրությունների համար, քանի որ աշխատանքում բացահայտվում են նշյալ խոսույթի լեզվական-հաղորդակցական յուրահատկությունները և առաջարկվում են միջազգային հարաբերություններում գործող հաղորդակցման սուբյեկտների խոսքային փոխներգործության տեսական հիմքեր:

Ատենախոսության **գործնական նշանակությունը** նույնպես անհերքելի է, քանի որ հետազոտության արդյունքները կարող են կիրառվել հանրալեզվաբանության, լեզվագործաբանության, կոնֆլիկտաբանության, հոգելեզվաբանության, խոսութային վերլուծության դասընթացներ մշակելիս: Ստացված արդյունքները կարող են օգտակար

լինել նաև քաղաքագիտություն և դիվանագիտություն ուսումնասիրող մասնագետներին, թարգմանիչներին, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին, դիվանագիտական առաքելությունների մամուլի կցորդներին, ինչպես նաև սոցիալական ցանցերում բլոգներ վարող դիվանագետներին և պետական գործիչներին:

Ատենախոսությունն ունի կուռ և տրամաբանական կառուցվածք. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք համապատասխանաբար բաժանվում են ենթագլուխների, ուսումնասիրության հիմնախնդիրները լուսաբանող և լրացնող ծանոթագրություններից, եզրակացություններից, օգտագործված գրականության, բառարանների և փաստական նյութի առցանց աղբյուրների ցանկից (166 անուն):

Ներածության մեջ ընդհանուր գծերով ներկայացվում են ուսումնասիրության հիմնահարցերը, վերլուծության կիրառման մեթոդները, հիմնավորվում է թեմայի ընտրությունը, արդիականությունը և նորույթը, տեսական և գործնական արժեքը, սահմանվում են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները:

Առաջին գլխում («Դիվանագիտական դիսկուրսի հետազոտությունները լեզվաբանության ժամանակակից հարացույցում») մանրամասն ներկայացվում է դիվանագիտական ենթաոճը՝ որպես պաշտոնական-գործնական գործառական ոճի ենթահամակարգ, հիմնավորվում է դիվանագիտական խոսույթը՝ որպես հետազոտության առարկա, ուսումնասիրվում են դրա կառուցվածքային առանձնահատկությունները և հիմնական գործառույթները, զուգահեռներ են անցկացվում ավանդական և թվային դիվանագիտությունների միջև՝ դրանց փոխլրացնող դերի շեշտադրմամբ, ինչպես նաև, հատկորոշվում են թվային դիվանագիտության լեզվական առանձնահատկությունները:

Երկրորդ գլխում («Դիվանագիտական դիսկուրսի լեզուն և ոճը») ատենախոսը ուսումնասիրում է դիվանագիտական փաստաթղթերն ու դրանք կիրառելու իրադրությունները, վերլուծում դիվանագիտական հաղորդակցության ռազմավարություններն ու մարտավարությունները: Ատենախոսը նշում է, որ դիվանագիտական խոսույթի լեզվահաղորդակցական և գործաբանական բնութագիրը,

մի կողմից, տեղեկատվություն հաղորդելն ու պահպանելն է, իսկ մյուս կողմից՝ այդ տեղեկատվության ստացողի վրա ազդելը, ուստի դիվանագիտական խոսույթն ունի որոշակի նպատակաուղղվածություն: Ատենախոսի կողմից քննության են առնվում նաև դիվանագիտական եզրույթները՝ իմաստային, խոսքիմասային և բառակազմական տեսանկյուններից:

Ատենախոսության **երրորդ գլխում** («Հուզարտահայտչականության առանձնահատկությունները դիվանագիտական դիսկուրսում») խորությամբ վերլուծվում են հուզարտահայտչականության լեզվական միջոցները և հուզահաղորդակցական տարրերը դիվանագիտական հաղորդակցության մեջ, մեղմասության դերը դիվանագիտական խոսքում, պարզաբանվում են դիվանագետի խոսքի յուրահատկությունները և խոսքային կաղապարները: Ատենախոսը իրավամբ նշում է, որ ժամանակակից դիվանագիտական խոսքում մեծ է լեզվաոճական միջոցների դերը (փոխաբերություն, փոխանունություն, համեմատություն, մեղմասություն, մակդիր, ակնարկ, դարձվածքներ, կրկնություններ, շարահյուսական զուգահեռություններ), քանի որ այդ միջոցները հուզականություն են հաղորդում խոսքին՝ հարկ եղած դեպքում ուշադրությունը շեղելով փոխանցվող տեղեկությունից:

Եզրակացության մեջ ամփոփվել են աշխատանքի հիմնական արդյունքները, համակարգվել ու ձևակերպվել են կարևորագույն դրույթները:

Չափազանց դրվատելի է ատենախոսի կողմից առարկայի վերաբերյալ արտահայտած բազմազան տեսակետների ներկայացումը: Ատենախոսության դրական կողմերից է այն իրողությունը, որ այստեղ անկհայտ է ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ ատենախոսի քաջատեղյակությունը: Ներկայացված ատենախոսությունը պատկանում է գիտական այն ուսումնասիրությունների թվին, որոնք կարող են շարունակություն ունենալ, քանի որ կրում են հեռանկարային բնույթ:

Այնուամենայնիվ, Վարդուհի Ղուկասյանի ատենախոսությունն առավել կատարյալ տեսնելու ցանկությունից ելնելով է, որ հարկ ենք համարում ներկայացնել մի

քանի նկատառում և առաջարկ, որոնք, կարծում ենք, ատենախոսը կարող է շահեկանորեն հաշվի առնել գիտական հետազոտությունների ընթացքում:

1. Ատենախոսության 1-ին գլխի 2-րդ ենթագլխում ներկայացվում է մի շարք երկրների ԱԳՆ նախարարների սոցիալական ցանցերում (Instagram, Facebook, X (Twitter) ներկայացվածության, բազմաթիվ հետևորդներ ունենալու և այդ ցանցերը որպես հաղորդակցման հարթակ կիրառելու փաստը: Կարծում ենք, կարելի էր հիշատակել նաև ՀՀ ԱԳՆ Facebook-յան և ԱԳՆ նախարարի X (Twitter)-յան պաշտոնական էջերը, որոնք նույնպես բավական ակտիվ են, հաճախ թարմացվող և ունեն բազմահազար հետևորդներ (ՀՀ ԱԳՆ Facebook պաշտոնական էջ՝ 49 հազար հետևորդ, ԱԳՆ նախարարի X (Twitter)-յան պաշտոնական էջի գրառումներն ունենում են 5 հազար և ավելի դիտում/:

2. Ատենախոսության 3.1 ենթագլխում դիվանագիտական խոսքում նշվում են մի շարք ոճական հնարներ, ինչպիսիք են փոխաբերությունը, փոխանունությունը, համեմատությունը, մակդիրը, ակնարկը, դարձվածքը, կրկնությունը և շարահյուսական զուգահեռությունը (էջ 111), սակայն ատենախոսը մանրամասն անդրադառնում է միայն փոխաբերությանը, փոխանունությանը և դարձվածքներին՝ չդիտարկելով ոճական մյուս հնարները: Ինչո՞վ է պայմանավորված այդ ընտրությունը: Արդյո՞ք ընտրված ոճական հնարները դիվանագիտական խոսույթում առավել հաճախադեպ են, և եթե այո, ապա այդ տարածվածությունը հիմնավորվա՞ծ է վիճակագրական տվյալներով:

3. Ատենախոսը 3.2 ենթագլխում նշում է, որ դիսֆեմիզմը դիտարկվում է որպես մտաշահարկման գործիք և կիրառվում է քաղաքական հարաբերությունների ոլորտում՝ կողմերին միմյանց դեմ տրամադրելու նպատակով: Արդյո՞ք սա չի հակասում դիվանագիտական խոսույթի հիմնական նպատակին, որը, ըստ ատենախոսի՝ հակասությունները անկոնֆլիկտ ու խաղաղ լուծելն է, ինչպես նշվում է էջ 26-ում: Ցանկալի կլիներ, որ ատենախոսության մեջ ներկայացվեին դիսֆեմիզմի կիրառման համատեքստային օրինակներ նույնպես:

4. Հայտնի փաստ է, որ դիվանագիտական խոսքը հիմնված է քաղաքավարության ռազմավարությունների պահպանման վրա, որը գործաբանական ուսումնասիրությունների հիմնասյուններից է: Կարծում ենք, աշխատանքն առավել կշահեր, եթե քաղաքավարության տեսությունը նույնպես վերլուծվեր՝ ընդգծելով դրա դերը դիվանագիտական խոսույթի կառուցման գործընթացում:

5. Ատենախոսն իրավացիորեն նշում է «բանակցային գործունեության ռազմավարություններն ու մարտավարությունները, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել կառուցողականի և ապակառուցողականի» և առանձնացնում այդ խմբերում ներառված ռազմավարությունները (էջ 29-30), սակայն ցանկալի կլիներ, եթե նա ներկայացներ այդ ռազմավարությունների առկայացման լեզվական միջոցները նույնպես:

6. Ատենախոսությունն առավել համակարգված դարձնելու նպատակով կարելի էր ներառել լեզվական միավորների կիրառման հաճախականության մասին վիճակագրական տվյալներ և ներկայացնել, թե շուրջ 600 ուսումնասիրված դիվանագիտական եզրույթների որ մասն են կազմում /տոկոսային կամ քանակական բաշխմամբ/ փոխառությունները, օտարաբանությունները և այլն, քանի որ ատենախոսը նշել է, որ սույն շարքում շատ են լատինական և ֆրանսիական ծագում ունեցող բառերը:

Նշված նկատառումները հայեցակարգային չեն, զուտ առաջարկությունների բնույթ են կրում և ամենևին չեն ստվերում ատենախոսության գիտական որակն ու կարևորությունը: Աշխատանքն առանձնանում է տեսական և գործնական նյութի գերազանց վերլուծությամբ, կուռ և համապարփակ շարադրանքով, հարցադրումների հստակ պարզաբանումներով և գիտական պատշաճ ոճով: Սույն բազմակողմանի և մանրակրկիտ հետազոտությամբ նոր հեռանկարներ են բացվում դիվանագիտական խոսույթի զարգացման համար:

Ատենախոսության սեղմագիրը և ներկայացրած տպագիր հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

Վարդուհի Արթուրի Ղուկասյանի «**Դիվանագիտական դիսկուրսի ոճական և գործաբանական բնութագիրը**» թեմայով ատենախոսությունն իր արդիականությամբ, ընդհանուր բովանդակությամբ, նյութի պատկառելի ծավալով, աշխատանքի վերլուծական ու մեկնողական մասի հագեցվածությամբ, ստացված արդյունքների հիմնավորվածությամբ և կիրառման հնարավորություններով համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Վերոնշյալը հիմք է տալիս մեզ՝ միջնորդել ԵՊՀ-ում գործող 009 մասնագիտական խորհրդի առջև՝ շնորհելու Վարդուհի Արթուրի Ղուկասյանին՝ իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը (Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ):

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ԲՊՀ Անգլերենի ամբիոնի 2025թ. հունվարի 30-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 8):

Նիստին և կարծիքի քննարկմանը մասնակցել են՝ բ.գ.դ., պրոֆեսոր Գ. Եղիազարյանը, բ.գ.թ., պրոֆեսոր Հ. Քաջբերունին, բ.գ.թ., դոցենտ Ս. Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Կարապետյանը, բ.գ.թ., դոցենտ Գ. Բարսեղյանը, բ.գ.թ. Ռ. Մուսեյանը, բ.գ.թ. Ա. Հարությունյանը, բ.գ.թ. Ա. Ավետիսյանը:

30.01.2025թ.

ԲՊՀ Անգլերենի ամբիոնի վարիչի Ժ/պ՝  բ.գ.դ. պրոֆեսոր Գ. Եղիազարյան

Հաստատում եմ Գ. Եղիազարյանի ստորագրությունը

ԲՊՀ գիտական քարտուղար՝



Հ. Փիլավջյան